57. ԽՈՎԻՎ ԿՀԱՂՈՐԴՎԻ

Ավնիկ Բադալ աղի տուն քյառսուն խինգյ տարի հավատարիմ խովվութեն անելու խամար ուր աղեն կուզի ուր ճիչ նվերմ տա:

Կմտածի կասի. - Նվեր ի՞նչ պիտի անի: Տանեմ Երուսաղեմ, խե զիկ մուխսի անեմ:

Կառնի խետ ուր, կէրթա Երուսաղեմ: Կէրթանն ժամ:

Աղեն կասի. - Կնա խոստովանվի:

Կասի. - Աղա՛, խոստովանանքյ ի՞նչ պանն ի, կուտե՞ն, թե՝ վեր ծառին կպուլսանի:

Ինչի որ քյառսունխինգյ տարի ո՛չ ժամ մտեր ի, ո՛չ պատարաքյի իրես տիսեր ի, ո՛չ էլ կարք-կանոն կյիտի:

Բանդալ աղեն կասի. - Բալա՛մ. արե կնա խոստովանի՛, գյլեոխտ կոտի տերտրոչ յանանճ, էն ինչ կասի, տյուն էլ ըսկուն ասա:

Ավնիյն ի, կէրթա կչիքյի տերտրոչ անանճ:

Տերտեր կասի. - Ասված թողություն շնորհեսցե:

Էն էլ կասի. - Աստված թողություն շնորհեսցե:

Տերտեր կասի. - Ասա՝ մեղա է աստծու:

Էն էլ կասի. - Ասա՝ մեղա է աստծու:

Տերտեր կասի. - Մեղա է աստծու, տյու՛ ասա, տյու՛:

Էն էլ կասի. - Մեղա է աստծու տյու՛ ասա, տյու՛:

- Ծո՛ խենթ:

Էլմ կասի. - Ծո՛ խենթ:

- Ծո՛ լիրվի:

Էլմ կասի. - Ծո՛ լիրվի:

- Ծո՛, խերտ անիծած:

Էն էլ կասի. - Ծո՛, խերտ անիծած:

Ասելուն պես հանլա խանբար պերան՝ տերտեր սիլեն կզանի:

Սիլեմ էլ Ավնիյ տերտրոչ կզանի: Տերտեր խորոտմ էնտեղ Ավնկեն կկոճի, քյոլոզ մոլոզ գյլխուց կթոնի:

Ավնիյն էլ կժողվի ուր քյոլոզ մոլոզ, կփախի ժանուց:

Էն էլ կիտի գյեռ էսա եէր խոստովանանքյ, կէրթա միամիտ կնստի ուր աղի կուշտ:

Բանդալ աղեն կխարցուցի, կասի. - Տղա՛, խոստովանա՞ր:

Ավնիյ կասի. - Խա՛. աղա, խոստովանա, ամա՛ն, որ հաղորդվելն էլ ըսկնա զոոն էլնի, խազար տարի կենա՝ չեմ հաղորդվեր:

Բադալ աղեն կասի. - Չէ՛. բալա՛մ, ընչի՞ զոոն ի: Առատուն տյու արե, ես քյե կտանեմ: Ինոր զոո էլնել ի՞նչ ի:

Բադալ աղեն կտանի ժամ, խետ ուր կշտին կկայնցուցի: Ավնիյն էլ գյաղտիյ կոպալ մեչ ուր շլվրին կկախի, նոր կէրթա՛: Անմեղ կկայնի ուր աղի կուշտ:

Կուգյա՛ էնգյուխ, որ ողջում կուգյա՛, մարթեր ողջում կառնեն իրարուց: Ավնիյն էլ կիտի՝ մեմէկու ականչին կփսփսթան, որ ուր տփեն էրէյվան տերտրոչ տփելու պատճառով:

Ձեռ ուղիյմ կտանի կոպալ շլվրի մեչեն կպոնի: Կուգյա էն գյա՛խ, որ տերտեր սեղնի վիրվեն կբոոա՝ զդրունս, զդրունս: Էն էլ կիտի թե կասի՝ էսա դրուս, խո՛ էսա դրուս:

Կասի. - Էսա դրուս, խո՛ էսա դրուս:

Կոպալ տյուս կքյա՛ճի, աչու կզա՛նի, ծախու կզա՛նի, մարթերաց կճղի տյուս կփախի:

- Էն մուխսիյութեն զի լազմ չի, - կասի:

Էլ ո՛չ աղի էրևան կուգյա, ո՛չ պա՛ն: